ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«15» 11 2022 թ.
№ 41/13/2-1553

Արման Բերակչյան Արսենի Ա/Ձ
ՀՎՀՀ 85931913
ՀՀ ք.Երևան, Գ. Էմինի 7

ՀՀ պաշտպանության նախարարության և Արման Բերակչյան Արսենի Ա/Ձ-ի միջև 05.05.2022թ. կնքված N ՓԳՀԱՊՁԲ-22-20/2-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2022թ. 2-րդ եռամսյակում մատակարարել 5000 հատ ապրանք, սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **15.11.2022թ.-ին** միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Արման Բերակչյան Արսենի Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***400 500 ՀՀ դրամ՝*** որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին ենթակա է գանձման **2 225 000 *ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին ենթակա է գանձման **3 337 500 ՀՀ դրամ** որակավորման ապահովում:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022թ. նոյեմբերի 24-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **2 225 000 *ՀՀ դրամ***՝ պայմանագրի կատարման ապահովման և **3 337 500 ՀՀ դրամ**՝ որակավորման ապահովման գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ